

asce group

հայկական պողպատածուլական ձեռնարկություն
армянское сталелитейное предприятие
armenian steel casting enterprise

„ԱՍԿԵ գրուպ“ ԲԲԸ
„АСКЕ груп“ ОАО
„ASCE group“ OJSC

85/02

05 օգոստոս 2021թ.

Էական փաստեր և տեղեկություններ ներառող փաստաթուղթ

Ղեկավարվելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենքի 127 հոդվածի պահանջներով, կից ներկայացվում են «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ Ընկերության, որպես հաշվետու թողարկողի, էական փաստերը և տեղեկությունները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վկայակոչված էական փաստերը և տեղեկությունները հրապարակվել են ընկերության պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ www.asce.am:

Առդիր՝ 3 թերթ:

Տնօրեն՝



Խ. Անտոնյան

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»

Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)
բաժնետերերի Արտահերթ ընդհանուր ժողովի (այսուհետ՝ ժողով)
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

(Կազմված է «03» օգոստոսի 2021 թ.-ին և բաղկացած է 3 (երեք) թերթից)

Ժողովի անցկացման վայր՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2

Ժողովի անցկացման տարի, ամիս, ամսաթիվ՝ 2021 թվականի օգոստոսի 03

Ժողովի սկիզբ՝ ժամը 14:00

Ընկերության բաժնետերերի Արտահերթ ընդհանուր ժողովին ներկա էին 7.865.480 ձայնի իրավունք ունեցող բաժնետերերից 6.463.271 ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր:

Ժողովին ներկա էին՝

- Վահան Հարությունյանը՝ 1.281.638 հատ հասարակ անվանական արժեքով բաժնետոմսերի սեփականատեր.
- Գևորգ Հարությունյանը՝ 1.300.000 հատ հասարակ անվանական արժեքով բաժնետոմսերի սեփականատեր.
- «Մորակո Հոլդինգս Լիմիթեդ» ՍՊԸ՝ 3.881.633 հատ հասարակ անվանական արժեքով բաժնետոմսերի սեփականատեր, որի անունից հանդես էր գալիս ընկերության տնօրեն Կարինե Հայրապետյանը:

Այսպիսով, Ընկերության բաժնետերերի Արտահերթ ընդհանուր ժողովին ներկա էին ընկերության բաժնետոմսերի 82,172 % ներկայացնող բաժնետերերը՝ քվորումն ապահովված էր, ժողովն իրավասու էր:

Քվեարկության է դրվել ժողովի նախագահին և քարտուղարին ընտրելու հարցը: Առաջարկվել է ժողովի նախագահ ընտրել Վահան Հարությունյանին, իսկ ժողովի քարտուղար՝ Նազիկ Ավագյանին:

Վահան Հարությունյանը (1.281.638 ձայն)՝	ԿՈՂՄ
Գևորգ Հարությունյանը (1.300.000 ձայն)՝	ԿՈՂՄ
«Մորակո Հոլդինգս Լիմիթեդ» ՍՊԸ(3.881.633 ձայն)՝	ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 6.463.271 ձայն (ընկերության բաժնետոմսերի 82,172 % ներկայացնող բաժնետերեր), դեմ՝ 0 ձայն, ձեռնպահ՝ 0 ձայն,

Քվեարկությամբ ժողովը որոշել է ժողովի նախագահ ընտրել Վահան Հարությունյանին, իսկ քարտուղար՝ Նազիկ Ավագյանին:

Ժողովի մասնակիցներին ներկայացվել է հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1) Լաուրա Բառբառյան

2) Մարգո Ավետիսյան

3) Լյուդմիլա Ալեքսանյան

Հաշվիչ հանձնաժողովի քանակը և կազմը դրվել է քվեարկության:

Վահան Հարությունյանը (1.281.638 ձայն)	ԿՈՂՄ
Գևորգ Հարությունյանը (1.300.000 ձայն)	ԿՈՂՄ
«Մորակո Հոլդինգս Լիմիթեդ»ՍՊԸ (3.881.633 ձայն)	ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 6.463.271 ձայն (ընկերության բաժնետոմսերի 82,172 % ներկայացնող բաժնետերեր), դեմ՝ 0 ձայն, ձեռնպահ՝ 0 ձայն,

Ժողովը որոշել է հաստատել հաշվիչ հանձնաժողովը 3 անդամից՝ հետևյալ կազմով՝

Լաուրա Բառբառյան

Մարգո Ավետիսյան

Լյուդմիլա Ալեքսանյան

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ՝

- 1) «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ տեղաբաշխված բաժնետոմսերի բաժանում,
- 2) «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատում:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ժողովի նախագահ Վ. Հարությունյանը: Վերջինս նշել է, որ շուկայի ներկայիս մարտահրավերներին ավելի արդյունավետ դիմագրավելու նպատակով առաջացել է անհրաժեշտություն իրականացնելու Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի բաժանում: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի բաժանումը պետք է իրականացվի այնպես, որ Ընկերության մեկ բաժնետոմսի անվանական արժեքը բաժանումից հետո կազմի 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ և Ընկերության մեկ բաժնետոմսը փոխարկվի նույն տեսակի (դասի) 8 (ութ) բաժնետոմսի, որի արդյունքում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակը կկազմի 62.923.840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի բաժանման արդյունքում Ընկերության հայտարարված բաժնետոմսերի անվանական արժեքը կկազմի 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, իսկ Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը 53.164.528 (հիսուներեք միլիոն մեկ հարյուր վաթսուներորս հազար հինգ հարյուր քսանութ) հատ:

Օրակարգի 1-ին հարցը դրվել է քվեարկության:

Վահան Հարությունյանը (1.281.638 ձայն)	ԿՈՂՄ
---------------------------------------	------

Գևորգ Հարությունյանը (1.300.000 ձայն)

ԿՈՂՄ

«Մորակո Հոլդինգս Լիմիթեդ» ՍՊԸ (3.881.633 ձայն)

ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 6.463.271 ձայն (ընկերության բաժնետոմսերի 82,172 % ներկայացնող բաժնետերեր), դեմ՝ 0 ձայն, ձեռնպահ՝ 0 ձայն,

Օրակարգի 1-ին հարցի կապացույթամբ ժողովը որոշել է՝

1. Բաժանել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Ընկերության տեղաբաշխված մեկ բաժնետոմսը կփոխարկվի նույն տեսակի (դասի) 8 (ութ) բաժնետոմսի, յուրաքանչյուրը 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով, իսկ Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակը կկազմի 62.923.840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի բաժանման արդյունքում Ընկերության հայտարարված բաժնետոմսերի անվանական արժեքը կկազմի 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, իսկ Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը 53.164.528 (հիսուներեք միլիոն մեկ հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր քսանութ) հատ:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ելույթ է ունեցել ժողովի նախագահ Վ. Հարությունյանը, ով նշեց, որ Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի բաժանման արդյունքում առաջացել է անհրաժեշտություն հաստատելու Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

Օրակարգի 2-րդ հարցը դրվել է քվեարկության:

Վահան Հարությունյանը (1.281.638 ձայն)

ԿՈՂՄ

Գևորգ Հարությունյանը (1.300.000 ձայն)

ԿՈՂՄ

«Մորակո Հոլդինգս Լիմիթեդ» ՍՊԸ (3.881.633 ձայն)

ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 6.463.271 ձայն (ընկերության բաժնետոմսերի 82,172 % ներկայացնող բաժնետերեր), դեմ՝ 0 ձայն, ձեռնպահ՝ 0 ձայն,

Օրակարգի 2-րդ հարցի կապացույթամբ ժողովը որոշել է՝

1. Հաստատել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ կանոնադրությունը նոր խմբագրությամբ: «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ կանոնադրության նոր խմբագրությունը կցել ժողովի արձանագրությանը որպես հավելված:

Ժողովի նախագահ

Ժողովի քարտուղար



Handwritten signature in blue ink.

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն. ԱՎԱԳՅԱՆ